

անհամար հայ որբերուն, այդ վրէժի մարմնացումներուն: Տէրութիւններուն յարանունն հասարակութիւնն ու ծայրահեղ նիւթադաշտ քաղաքականութիւնը անհրաժեշտ դարձուցած են թուրքերային վաղ կամ անագան բաժանումը: Անոր, երբ վերջին ժամը ալ հնչէ, որք պիտի գանուինք, ի՞նչ վիճակի մէջ, եւ ի՞նչ պիտի ընենք: Այս կէտը անաւոր պատասխանատուութիւններ կը դնէ մեր վրան: Արժեքնք, այս անգամ աւելի լրջօրէն, գործնք, այս անգամ աւելի անձայն, աւելի շրջահայեաց, օգտուելով մեր սխալներէն եւ ուրիշներուն սխալներէն: Գործնք, առանց վնասելու թիւրքէն ու մեր կրթարարներուն հալածանքներէն: Չը մոռնանք որ մեծ ու պզտիկ բոլոր յեղափոխութիւններուն մէջ գործողն ու յաղթանակողը միշտ որակը եղած է քան թէ քանակը: Ուսացած կատարութիւն, միտքի տակ ծածկուած վրէժխնդրութիւն պահեստի ուժեր են, զորս գիտնալու ենք գործածել ժամանակին ու խոնական կերպով: Պատմական օրէնքները, մեր մարդկային ու ազգային իրաւունքները կը մղեն մեզ, յատկապէս, անընդհատ եւ անվհատ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայդէլբերգ, 19 Մարտ

Հայ ուսանողական համագումար

Սիրուն, զարնանային օրեր, ախորժելի օդ, եւրոպայի հայ ուսանողներին երկրորդ համագումարն է: Հաւաքուած են 21 ուսանողներ եւրոպայի զանազան կեդրոններից եւ հայրենիքի այլ եւ այլ կողմերից. այս անգամ վանքերէն, պոլսեցիներ, եւ ուսանողներ՝ որոնց մեծագոյն տոկոսը՝ զարաբաղցիք են: Ուսանողներ եկած են Գերմանիայից, Բերլինից, Լայպցիգից, Գարմախից, Հալլէից, Ֆրանկֆրտից եւ Մինխենից, Ֆրանսիայից, Պարիզից, (պատգամուոր) եւ Կոնստանտնուպոլիսից, Ֆրանսիայից, Ֆրանսիայից (պատգամուոր) եւ Տիւրքիայից:

Նախագահը բաց արեց նիստը զանազան կողմերից եկած շնորհաւորական նամակների ու հեռագրերների ընթերցումով: Ամենքից աւելի հետաքրքրական էր Աւստրիական հայ ուսանողների (Լէմբերգի) գեղեցիկ ուղերձը գերմաներէն եւ ֆրանսերէն լեզուով, որ ուղղւած էր հայ ուսանողական համագումարին: Իրենց ջերմ բարեմաղթութիւնները յղելով մեզ եւ ցաւելով, որ անկարող են այս անգամ մասնակցել համագումարին, Լէմբերգի մեր հայրենակիցները նկարագրում են իրենց արդի վիճակը, հայութեան թշուառութիւններն ու վերածնութիւնը եւ այս կոչ են անում եւրոպայի հայ ուսանողութեան՝ ըստ կարելու ինչ նպաստելու Լեհաստանի հայերի ազգային գիտակցութեան զարգացմանը: Ուղերձը տեղ տեղ, ճիշտ է, համեմատ էր պատկերակալական բացատրանքներով, բայց ընդհանուր առմամբ լուրջ էր խորագրւած եւ խոր տպագրութիւն թողնեց ժողովականներից շատերի վրայ: Այնուհետեւ ժողովը դիմեց կանոնադրութեան մի քանի կէտերի վերաքննութեան: Երկար վիճարանութիւններից յետոյ որոշեց Յ ամիսը մի անգամ ուսանողական փոքրիկ ժողովածու հրատարակել, ուր պիտի զետեղւին զլրատարապէս համագումարում կարդացւած դատախոսութիւնների հա-

մառօս ըզմանողութիւնները, վիճակագրական տեղեկութիւնները մասին եւ այլն: Սոյն որոշումը ի կատար ածելու համար՝ դեռ պիտի ենթարկուի բոլոր ուսանողութիւնների քննարկութեան:

Կարգացեցան երեք դատախոսութիւններ: Ա. Պ. Ն. (Լայպցիգից) կարգացած մասնակիցներն ուղղութիւններին մասին: Պ. դատախոսը խղճամիտ կերպով ուսումնասիրել էր իր բնարած նիւթը: Ծօշափած թէօրեաների առթիւ սկսեց երկարատեղ վիճարանութիւն, որի մէջ մասնակցութիւն ցուցանեցին մեծամասնութիւնը:

Բ. Ժընեւի պատգամուոր Պ. Յ. Խօսեց, Հայ համալսարանականի կողման մասին, ուր նա առանձնապէս ծանրանալով ուսանողի ինքնակրթութեան եւ ինքնազարգացման պարտականութիւնների վրայ՝ շոշափեց միաժամանակ հայ կեանքի ներկայ հրատապ խնդիրները եւ հրաւեր կարդաց. «ուսանողութեանը՝ աւելի մօտ չվերելու կեանքի հետ, հետաքրքրուելու այդ կեանքում գոյութիւն ունեցող տարբեր հոսանքներով եւ յարելու այս կամ այն հոսանքին: Այդ հարցերը առիթ եղան երկար ու տաք վիճարանութեան: Գիտնական հակաճանաչողներ (երկու հոգի) ի վերջոյ կայացուցան սեռական որոշում ի հասանելիութեան դատախօսի սասանների, այն է՝ Հայ ուսանողութիւնը իրեն ինքնակրթող տարր՝ չը սահմանափակուելով սոսկ ինքնակրթութեան աշխատանքով՝ կարող եւ պիտի ի իր ուժերի շափ աջակից լինի հայ ժողովրդին, հայ երիտասարդութեանը՝ նրա զօրութեան պայքարել մէջ:

Գ. Վերջապէս կարգաց Պ. Թ. (Բէրլինից) իր փոքրիկ շնորհակցումը «առական հայ երիտասարդութեան մասին»:

Հանդարտ, առանց որեւէ կրքերի ու յուզումների, վերջացան համագումարի նիստերը: Տեղի ունեցաւ հրաժեշտի մի փոքրիկ երկկոյժ «Գիտնականները» բնագործում, արդար ցրեցին ամենքն էլ զարթ տրամադրութեամբ, փափագելով կրկին հանդիպել իրար յաճորդ ատրւայ համագումարին:

Ուսանող ձիպուտի, 16 Մարտ

Քսանը հինգ տարի առաջ, առաջին անգամ երկու հայեր վաճառականութեան նպատակով Եգիպտոսէն, Մասովայի վրայով, Հայկէստան են գնում ու Օհաննէս Թալաւորի մօտ ընդունելութիւն գտնում: Այդ օրից սկսւում է հայերի հաղորդակցութիւնը Հայկէստանի հետ, եւ զաղթականութեան հիմքը դրվում: Հարարն է որ այսօր ներկայացնում է Հայ զաղթականութեան կեդրոնը, ուր իրեն Հայկէստանի ամենազարգացած վաճառաշահ քաղաքը, միւս օտարականներին հետ հաստատվել են նաեւ հայերը, որոնք թիւը հազիւ յիսուսի կը հասնի եւ որոնք մեծ մասամբ ստեղծատանի զկայքերից յետոյ է, որ եկել են ապաստան գտնելու մի քիչ էլ հարբստանալու փախազով: Չեմ կարող ասել թէ դո՞ւ են իրանց վիճակից ու նախանձիլի դիրք ունեն. շատ չնչին է իրանց նիւթական շահը, համեմատելով կրած բարոյական ու ֆիզիկական տանջանքներին. իրաւ, թէ եւ չկայ թուրքի բարբարոսութիւնը՝ բայց լուսաւոր աշխարհից կարգած ու բարիքներից զրկված միտն էլ անասնելի է. նա մասնաւոր երբ ստիպուած եւ երբեմն էլ վայրենիներ

րի քմահաճոյքներին համբերել: Այդ կողմից աւելի բազումը ենք ձիպուողիւմ ապրողներս: Այս տեղ էլ երկու տարի է լ վեր երկաթուղու շինութիւնը գէպի Հայկէստան՝ գրաւել է եւրոպացիների ուղղութիւնը, մասամբ էլ հայերին՝ որոնք խուճր խուճր գալիս են Եգիպտոսից իրանց ձեռքերի ուժը գործ գնելու եւ մի քանի սեւ փող շահելու: Ծիպուողի հայերի թիւը երեսուսի է հասնում, մեծ մասը վաճառական ու մի քանիսն էլ արհեստաւոր: Ընդհանրապէս այս կողմերը եկող, թէ վաճառական եւ թէ գործաւոր, ընդ միշտ հաստատվելու նպատակով չեն գալիս. նրանց միակ նպատակն է ժամանակաւորապէս աշխատել եւ որքան կարելի է շատ փող շահել ու կրկին վերադառնալ իրանց հայրենիքը: Իսկապէս էլ, ինչքան պիտի կարողանայ նրանց կապել այս երկրի հետ՝ որ ոչ մի հաճոյք չի կարող տալ իր բնակիչներին. չկայ մի ծառ՝ որի ստուերի տակ կարելի լինէր մի թիթեւ շունչ քաշել, չկայ մի պաղորակ ազրիւր՝ որի կողքին նստելով կարելի լինէր մի քիչ զովանալ. կայ միայն այրող արեւ եւ աւաղուտ երկիր՝ որոնց կարող է զիմանալ միայն երկրի հարազատ զաւակը: Ահա թէ ինչու մարդիկ այստեղ գլխի ցերեկ փող վաստակելու միտքով են միայն ծանրարեւոնրված եւ նրա մէջ են որոնում հաճոյք: Բայց զժբաղադարար շատ քիչներն է վիճակվում իրանց ապագան ապահովել՝ մինչդեռ շատերը հազիւ կարողանում են ճանապարհի ծախս ձեռք ձգել ու հեռանալ:

Կ. Ա.

Կորնա-Օրեհովիցս, 24 Մարտ

Թըրնովայի մէջ ինը հարիւր տարիներէ հետէ շինուած մի հայկական կիկեցի կայ: Մեր նախահայրերը կարծես թէ դուշակելով որ ինը դար յետոյ թրքական բռնակալութեան հայեր պիտի պատասխանին Պուկարիա, ուզած են մեր կրօնին պահանջած վայրերն ալ պատրաստել: Թըրնովայի ազգայիններէն Տիար Գրիգոր Սարգիսեան թէ զաղթականներուն գործ հայթայթելու եւ թէ բարեկատու գործ մը ըրած ըլլալու համար, եկեղեցին նորոգել կուտայ իր անձնական քսակէն: Այս ամէնը լաւ:

Սակայն թուականս երեք ամիսներ յառաջ Պուքրէյէն կը հասնի Տէր կարապետ Սահակեան հոգեւոր հոռը միտթարելու համար: Գաղթականութիւնը կը հաւաքէ եւ թաղական խորհուրդ մը կը նստի հինգ անգամներէ բաղկացած որ Ազգ. Պատրիարքարանի վաւերացումին կենթարկուի: Ամէն անհատ շարաթական մի սուրբ կը սահմանուի: Տէր կարապետ զահանան վար կը դրուի: Երկու ազգայիններ կապահովեն քահանային ամուսկանը: Բայց յետագայ դէպքը ամէն ինչ անկարգութեան կը մատնէ:

Պուտոյ զէպերէն հետէ հոս հաստատուած է քղեցի հայ մը որ վերջերս կամուսնանայ Պուկարեհի մը հետ, թէ եւ արդէն ամուսնացած էր եւ զաւակներ ունէր հայրենիքին մէջ: Պուկար քահանան օր մը կուգայ եւ կրտսէ թէ Տէր կարապետի մի քիչ գրամ տայ, որովհետեւ կարող է վնաս տալ ամուսնութեան: Տէր կարապետ կը հասնի եւ իրր թէ Պատրիարքարանին հրամանով գրամ կը պահանջէ: Քղեցին 43 ֆրանք կուտայ: Մէկ քանի օրերէն քահանան կուգայ եւ նորէն գրամ կը պահանջէ: Ուստի թիւնը կը յայտ

նուի: Ուրիշ ազգայիններ կիմանան, կատարութեան կը դիմուի: Գահանան կը դատապարտուի, թէ եւ կը յայտարարէ թէ իր անձնական ծախքերուն համար փոխ առած է զայն: Մեծ գայթակղութիւն կը լլայ: Թաղական խորհուրդը խմբովին կը հրաժարի:

Այս զէպը շատ գէշ ազգեցութիւն ըրաւ թէ ազգային շրջանակին եւ թէ պուկար շրջանակներու մէջ: Տէր կարապետ քահանայ մեծ հարուած մը ստուաւ մեր ազգային սրբիկն եւ կապականութեան:

Հ. Վերանես

Լօրէնս, 5 Մարտ

Հոգեւանդիւս Ռիւ եւ Ար յիւզագուեցեալ յիշատակին

1899ի Ազատութեան հովերը, ու մէն կողմէ կեան ու հայուն սիրաթ թրթուացոյցին, վերաբարձելով հայրենասիրական գագուեցեալներ:

Քուպան եւ կրէպէն ազատեցան զիրենք ճշնող ձեռքերէն. Հայաստանի գեո արեւնա անկողնի մը վրայ կը զաւարտուի, բռնաւորին ճրարներուն տակ, սկարափոխները ու ժամապատեալ կը քաշուին. իսկ անոնք որ անկեղծօրէն կը փափաքին ու կաշխատին հայրենիքի ազատութեան, ու մէն առիթէ կօգտուին, գործին սէրը վառ պահելու ժողովուրդին մէջը:

Այս նպատակով էր որ տեղոյս Հայ Յ. Գահանայութեան կօմիտէն. Վարդանանց օտնի օրը հոգեհանդիստ մը կատարել առաւ հին եւ նոր զիցազուեններուն յիշատակին:

Պատարազի եւ հոգեհանգստի արարողութիւնը կատարեց Գեր. Վ. Մ. վարդապետը, ամերիկեան եկեղեցոյ մը մէջ. երկուսն հայ բաղնիքեան մը ներկայութեամբ էր որ տեղոյս հայր սուրբ իր քարոզովը ժողովրդի ին յայտնեց բոլոր այն շարքարանքները, որ ազգի փրկութեան գործին նուիրուածները կրած են եւ կը կրեն:

Երեկոյնի զարձակ նոյն կօմիտէն հրապարակային ժողով մը ունեցաւ Վաղինակ վարդապետի նախագահութեամբ, ուր նորէն ստատուելու ու ոգեւորող բանախօսութիւնները եղան: Ժողովին աւարտումէն ետքը, ցաւ է ըսել, սպարկը միայն «կենդանի ընկածներուն»: Հակայիցափոխական խօսքեր, վէճեր, Այս պարտները գոնէ ինչու. չեն սգեւորուի դեռ երէկի ազատեցողութե օրինակէն:

ԻՌՈՎԱՌ. Գ.

Ն. Ա. Մ. Ա. Ա. Ս. Ո. Ի. Բ.

Ի. — Ձեր զրկած 24 ֆրանքը ստացանք: Ձեր թերթերը եւս կեան նաժակատունէն:

Բ. Ս. Տրէգնօ. — Ստացանք մէկ ու կէս տարուան 2 թիւի համար բաժնեկին 18.45 ֆրանք: Սակայն չէք գրած թէ մէկ տարեկանը որի հաշիւին պիտի անցնի, եւ վեցամսեան որի: Ձեր թերթերը կանոնաւորապէս ստանալու համար, զրկեցեք մեզ ձեր երկու հասցեաներն ալ ամբողջովին եւ պարզ կերպով գրեալ:

— Մեր Ամերիկայի բոլոր բաժնորդներէն կը խնդրենք որ իրենց հասցեաները մեզ զրկեն որոշապէս գրուած առանց կրճատուելու: Հասցէի անկանոնութեանց պատճառով շատ չիմթնութիւններ կ'ընեն: Այսուհետեւ պիտի ջանանք բոլոր առանց ստջեւր տանել:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Այն տերբուկ ու առլէփ ճանապարհը՝ որ, լեռնային անանցանելի գծուար ու նեղ գիծ մը ձեւանալով, մեզ պիտի հեռացնէր տակաւ այն կտրիճներու երկրէն, երեւակայական մաղէ կամուրջի զարհուրանքը կազդէր... ու մենք՝ մեր զինուած առաջնորդներով, քանի կը բարձրանայինք այդ սարերը, ու որքան կը մխրճուէինք հոծ անտառներու անթափանց թաւուտներու ու յամառ ժայռերու անմառչելի վապարներու մէջը, այնքան կանուշնայ մեր աչքին այդ երկար ձորի վրայ բացուող երկնքի անարատ կապուտն ու լեռնոտ երկրի վեհաշուք տեսարանը: Տարիներու բարդ ընթացքին ու կեանքի այնքան դառն հակապատկերներու ստուերին մէջէն, հոգիի անուշ կարօտով մը կը յիշեմ այն մէկ քանի ժամերը, որ այդ ազատ սարերու վրայ ապրող, հիւրասէր ու կարիճ գեղջուկներու հետ անցուցինք: Այդ կղզիացած լեռներու մէջը կեանքը ցանկալի երանութիւն մըն էր, որ սիրտը և միտքը թուլացնող ու ջիւղերը հիւանդացնող խոր մաածուցներէ ու մաշող տարփանքներէ անկաշկանդ՝ պարզութեան ու անարտաբան զիւթի թեւերով ընդգրկուած, որտեղ ու մտքի կատարեալ առողջութեամբ, արեւակից այդ արի ժողովրդեան զէնքի ու սուրի, վառօգի ու գնդակի սիրական զբաղումներով, այն վսեմ սարերէն անդին՝ քաղաքակրթութեան ջրլատիչ արտերով բաժնուած, ու կեղծաբանութեան ազդի յիմակին տակ իրար բզբող ազգերու ու երկիրներու եռուզեռու մտացած, անդորր վիճակի մը ամենէն անուշ երազի մէջ կը կարծէինք ինքզինքնիս:

Ու այդ անուշ ժամերուն իրական հեշտութիւնները՝ հեռուցեալէ Սասուն և Խոյթ իրարմէ անջրպետող ամենի սարերն ի վեր բարձրանալով, երազաւ մտապատկերի մը կը փոխուին 4-5 ժամերու տարփոտ գնացքէ մը ետք: Ժայռոտ լեռան մը խորխտաբար բարձրացող զէնթիւ վրայէն, կարօտալից յեանակնարկ մըն ալ կը յաճենք հայրենիքի այդ կոյս խորշի ազատ սարերու ու անհպելի ձորին վրայ: Վերջին անգամ այդ անխառն մթնոլորտէն՝ կաղզուրող երկար շունչ մըն ալ քաշելով, հմայուած ու արքշիւ սարի միւս կողմը կը շրջինք: Ծառաղի և Տարսրիկի լեռները, իրենց հպարտ շարքերով, կաներեւութեան մեր տեսութիւնէն իսկ մենք մերթ երկրելով, մերթ հետաքրքրական հարցումներու զեղով մեր ուղեցոյց Հոսանին ու Վարդանին, երկար, շատ երկար, կը ճամբորդենք այդ ծիւծիլ քարերով ու անհուն պուրակներ

րով ու անտառներով ծածկուած իննաշէնայ ու Խոյթայ սարերէն, ուր փչող անմահական քամին շարժանակի գլղլացող անթիւ պաղ աղբիւրներու անուշ կարկաչներու ու բուրոյ ծաղկանց անմահական հոտերու հետ մուշուցին մեզ մեր խոնջանքը:

Մենք սպասուրութեանց ամենէն զօրաւորին ներքեւ, իրականութեան ամենաթափարձ յոյսերով ու յոյզերով պատարուն՝ գիշերուան չը գիտեմ ժամը քանիին, կրկին կը վերադառնանք Ս. Աղբերկոյ վանքը, ուր, ամբողջ միաբանութիւնը, ամառուան լուսնակ երկնքի զով գիշերուան անուշ քնով, կը խոկար անհոգ ու միամիտ երազներով:

Ս. Աղբերկոյ վանքէն Բաղէշ երթալու երկու ճանապարհ կայ: Մէկը, Խոյթայ մէջէն, Մշոյ գաշալի հարուային կողմէն ուղղօրէն անցնելով, Բահվայի վրայէն կը ձգի: Միւրը, այդ գաւառի անհարկու լեռներու սրտերու վրայ, օձապտոյտ զիկղակներով գծուած սարի ճամբան է, որ կտրելով Խոյթայ լեռները, կանցնի Մօսկանու սարափելի սարերը, ու կառաձգի մինչ կեղբոնական Մօսկան և Գղեխ: Այս վերջին ուղին՝ առանց մօտձանցի քրիտ ուղեկցի մը ճամբորդելը՝ թէ սոսկալի դժուար և թէ աներեւակայելի վտանգներ ունէր և ունի:

Արշալուսի փոխ ճառագայթները՝ Ս. Աղբերկոյ դարաւոր գմբէթի քառաթեւին վրայ նոր կը տարածուէին: Սասունի սիրուն սարերէն փչող ազատ քամին՝ այդ լեռներու ու ձորերու վրայ այնքան անմահական հոտեր բուրոյ ծաղիկներու կենդանի արտաշնչումը՝ իր զեղուն հոտանքներով չորս կողմը կը լեցունէր, Ս. Աղբերկոյ հսկայ զանգակատունէն հնչող խորհրդաւոր ձայնը ինչպէս զօղանջներով հայկական հոգիի մեծութիւնն ու քրիտոնէական կրօնի համար՝ մեր ազգային դարաւոր մարտիրոսութեան վեհանձն յաղթանակը այդ ամենի ու գոռ լեռներու մէջը կարճագանգէր: Ոյդ հինաւուրց մենաստանի շուրջ ու բոլոր դարերէ ի վեր աճող գեղուղիլ ուռնիներու ու վիթխարի կայնիներու բարձունքէն հայրենիքի սիրուն թռչունները՝ իրենց նախ երգանքով, այդ լեռնային մեղանուշ ոլորտի մէջը զմայլելի ներդաշնակութիւն մը կը ստեղծէին: Յայնժամ մենք մեր համեստ նշարաններէն դուրս գալով, այդ փառաւոր վանքի բարձր ամառաւոր վերջին համարը մը կուտանք ու սրտի և մտքի կատարեալ անէացումով կը հեռանանք այդ վանքէն, մեր քայլերը ուղեկցելով գէպի լեռնային այն սոսկալի ուղին՝ որ կը ձգէ մեզի Մօսկան ու Գղեխ գաւառակները:

Մ. Ա. Ա. Պ. Ս.

(Երասուկակիցի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Տիրաններէն կը դրնն թէ թուրք օտարկանութիւնը սաստկապէս կը հալածէ հայերը: Հայերէն տառերով գրուած բոլոր նամակները, գրքերը և գրութիւնները կը գրաւուին և անոնց տէրերը կը բանտարկուին: Գիւղացիներուն վիճակը աւելի արսափելի է. քուրտներուն հալածանքներէն զարհուրած գէպի քաղաք կը դիմեն խումբերով: Քուրտերը գլխաւոր են նաեւ չորս երկրասարգներ և Տէր Ստեփան քահանան:

— Ամերիկայի հայերուն մէջ շարժում մը կայ զինաթափի վեհաժողովին առթիւ միթիւններ կազմելու, սրբուհիներ քուէարկելու և զանոնք տեղական կառավարութեանց կամ ուրիշ միջոցներով վեհաժողովին ներկայացնելու: Նմանօրինակ շարժումներ կան նաեւ ուրիշ տեղեր և կը յուսանք թէ ամբողջ արաստահամը պիտի միանայ այս նպատակին համար:

— Ուրախութեամբ կիմանանք թէ ձէրլիի հայերը կը ջանան ծաղկոց մը բանալ հայ մանուկներու համար:

— Ամերիկայի մէջ Զէյթունի հանգանակութեան 250 անգլոսկի Հալէպ եւրոպական հիւպատոսի մը զրկուած է ապահովութեամբ իր նպատակին հազնելու համար: Հանգանակութիւնը կը շարունակուի:

— Փրօփիտէնի հայերէն ումանք սկսած են իրենց զաւակները ամերիկեան անուններով կոչել: Պէտք է աշխատիլ որ այս գէշ սովորութիւնը չընդհանրանայ:

— Մանչէսթըրի ազգայինները 300 սկի զրկած են Պատրիարքարան գաւառացի կարօտալիներուն բաշխուելու համար:

— Էնկիւրիի նախորդ տեղապահը տեղեկագիր մը առած է Պատրիարքարան իր համարատուութիւնը պարունակող: Տաճատ վարդապետ որ 5-600 սկի հաւաքած էր որբանոցի մը համար, իր այս տեղեկագրով 90 սկի կը պահանջէ ազգէն:

— Արսէն վարդապետ Վեհունի Պուլկարիայէն շարաքուած, նամակ մը զրկած է Պատրիարքարան որպէս զի Եղիսիոս երթալ պաշտօնով: «Սուրհանդակ» իրաւամբ զիւրել կուտայ թէ հաւանակահարաւ այս լուրը հասածին պէս, Սլիվէնի ազգայնոց նման, Եղիպտոսակ ազգայինք ալ պիտի բողբեն Արսէն վարդապետի դէմ:

— Թիֆլիզի հրատարակչական ընկերութիւնը հրատարակած է Ս. Մարտիրոսի մի նոր գիրքը «Սէրէոսի պատմութիւնը և Մ. Խորենացիի վերնագրով»:

(—)(—)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍՐԻԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Հեռագիր մը կը զեկուցանէ թէ պատրաստութիւններ կը տեսնուին Լեհաստանի Սքէրնէյի քաղաքին մէջ յառաջիկայ աշունին տեսակցութեան մը համար Ռուսիոյ, Աւստրիոյ և Գերմանիոյ երեք կայսրերուն միջեւ: Եթէ այս լուր վերջնականապէս ստուգուի, կարճ ժամանակէն մեծ փոփոխութիւններ կրնանք սպասել աշխարհի ամբողջ մակերեսին վրայ:

Հայկական կոտորածներու յաւանակ, Ռուսիա միահեծան կը տիրապետէր: Ֆրանսա, անոր հլու դաշնակիցը, իր բոլոր ուժով կօղնէր: Անգլիա բոլորովին յուսահատ կը թուէր: Ռուսիա փութով կը շինէր իր երկաթուղիները ծայրագոյն տրեւելքի մէջ, նախ Չինաստանը և յետոյ Թուրքիան ամբողջապէս գրաւելու համար:

Սակայն Գերմանիա և Ամերիկա բոլորովին փճացուցին Ռուսիոյ ծրագրերը: Քիստո-Չաուի անժամանակ գրաւուող գրգռեց ուրիշ պետութեանց ախորժակը: Բոլոր մեծ պետութիւնները ստացան իրենց բաժինները և հեռաղհեակ նոր գրաւումներ կընեն Հեռագիր մը կը ծանուցանէ թէ Խաղիս ալ գրաւած է Սան-Մուսի ծովախորշը, թէ Գերմանիա նոր երկիրներ գրաւած է Չինացուց մոլեռանդութիւնէն օգտուելով, թէ Անգլիա Հօնկ-Քօնկի քով ստացած հողը վերջնականապէս պիտի գրաւէ քիչ ժամանակէն: Մինչեւ իսկ շրջոյց կայ թէ Աւստրիա, Պէրճիքա և Հօլանտա պիտի ստանան իրենց բաժինները: Ռուս քաղաքացիները զարմացած այս դէպքերուն վրայ, կը յայտարարեն թէ Ռուսիա կը փափաքի Չինաստանի ամբողջութեան:

Որչափ կը մերձենայ զինաթափի վեհաժողովին գումարումը, այնչափ անձկութիւնը կուտայ: Ամէն կողմ ահագին յուզումներ կան: Հայաստան արիւնլուայ, Մակեդոնիա չարչարուած, Փիլիպանները ապստամբ, Սամօայի մէջ հզօր հակառակութիւն մէկ քանի մեծ պետութեանց միջեւ, վերջապէս ամէն կողմ ընդհանուր պատերազմի մը կայծերը կը փայլին:

Ռուսիա շատ լաւ գիտէ թէ այս ընդհանուր պատերազմին մէջ իր վիճակը շատ գէշ պիտի ըլլայ: Արտաքին սովեղօժ երեւոյթին հակառակ Ռուսիա փտտած է ներսէն: Իր լայնածաւալ պետութեան ամէն կողմը խառնակութիւն և անկարգութիւն կը տիրեն: Տակաւին հաղորդակցութեան ճամբաները շինուած չեն, գանձը պարտաւ է ամէն ժամանակէ աւելի: Ֆրանսա ալ փոխատուութիւն չը կրնար ընել: Կա-

առավարական ամէն շրջանակներն ալ անբարոյականացած են : Այս պատճառներով Ռուսիա չը կրնար այս ընդհանուր պատերազմէն շահաւոր դուրս ելլել : Ճիշդ այս պատճառով Չարը զինավաճի իր նշանաւոր հրաւերը բոլոր :

Ռուս կառավարութեան համար ուրիշ բան չը մնար, այլ համաձայնի իր դրացի երկու պետութեանց հետ և անոնց ակարճակին քահայտութեամբ, իր բազմանքներուն տիրանալ քանի որ տակաւին Ժամանակը անցած չէ : Արդեօք Ս. Պետրոսի կտակը յառաջիկայ բանակցութեանց նիւթ պիտի լինի՞ և թէ վերջապէս Ռուսիա պիտի տիրանայ այդ արդիւնաւ պտուղին, Ժամանակը յայտնի պիտի ընէ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապանիոյ մէջ Գարլիտները մեծ գործունէութիւն կը ցուցնեն, սահմանադրութիւն վրայ զէնք կը հաւաքեն և զինուորական վարձուութիւններ կը կատարեն : Կառավարութիւնը բաւական մտահոգ է այս մասին և միջոցներ ձեռք կառնէ յեղափոխութեան մը առաջը առնելու համար : Մինչև իսկ Մատրիտի մէջ Գարլիտները խնձոյք մը կազմակերպեցին ուր խիստ զրկուած ճանապարհորդները կը խոստանային :

Հավասի մէկ հեռագիրը կը յայտնէ թէ Ռուսիոյ և Անգլիոյ միջև բանակցութիւնները կը վերաբերին ոչ միայն Չինական խնդրոյն, այլ բոլոր այն խնդիրներուն որք ներկային մէջ գրգռութեան պատճառ են երկու պետութեանց միջև և ապագային կրնան մեծ շփոթութեանց առիթ տալ :

Պաշտօնապէս կը ծանուցուի թէ ապրիլ 17ին Անգլիական կառավարութիւնը վերջնականապէս պիտի գրաւէ Հոնկ-Գոնկի մօտը վարձուած Չինական հողը :

Սամոայէն կը հեռագրեն թէ փոքրիկ պատերազմներ կը ըլլան միջև : Թնթանութեամբ կը շարունակուի : Առեւտուրը զազրած է, բոլոր խանութները փակուած են : Մալիէթօս, անդլիացեաց ընտրելին, բազմած է գահին վրայ, հիւպատոսներուն և պետութեանց հրամանատարներուն ներկայութեան : Բայց Գերմանիա պիտի չուզէ ճանչնալ զայն :

Բասթօնի յիշատակին համար արձան մը կանգնուեցաւ Լիլի մէջ ժողովրդային հանգանակութեամբ :

Ինչ ալ ըսեն Պապին բժիշկները, կը կարծուի թէ երկար կեանք պիտի չունենայ : Հիմակէն սկսած են ընտրելի Պապին վրայ խորհրդակցել և վիճարանիլ : Երկու զօրաւոր կառակցութիւններ կան, որոնց մին կուզէ ընտրել Պապ մը որ զօրեղապէս

կուրի Իտալական կառավարութեան հետ, իսկ միւս մասը կուզէ հաշտարար քաղաքականութեան հետեւիլ և այդ պատճառով նոյն դադարիւրները ունեցող մէկը ընտրել :

Ռուս կառավարութիւնը սահմանադրութիւնը քորտերու մասին խստիւ բողոքելէ զտտ, պահանջած է պատերազմական տուգանքին մնացորդը թուրք կառավարութեանէն : Հակառակ գանձին զատարկութեան : Կառավարութիւնը կարող եղած է համոզել Օսմանեան պանթան որպէսզի 122,000 ոսկիփոխաւ իրեն Ռուս կառավարութեան բերանը գոցելու համար :

Կ. Պոլսէն կը ծանուցանեն թէ Մ. Միքայէլ Նիւլինսքի, «Քորէսփոնտ» անս տը լէսթիոն տնօրէնը, մեռեր է : Բերայի թերթերը կը ըսեն թէ Նիւլինսքի գաղտնի յարաբերութիւններուն էր բարձր շրջանակներու հետ և այնպիսի գործառնութիւններ կ'ընէր որք շատ բարձր համարուած չեն ներշնչեր և զորս քիչեր կրնան ստանձնել :

Կ. Պոլսի ֆրանսական պահականաւ ճարտանէլի հասու : Կըսուի թէ ճարտանէլի ֆրանսական հիւպատոսին որդին թուրք զինուորներու կողմէն անպատիւ վարձուքի ենթարկուեր է : Կը կարծուի թէ պահականաւ այդ պատճառով հոն զրկուած ըլլայ :

Սուլթանը մերժած է վաւերացնել Անգլիոյ հետ կնքուած պայմանագիրը՝ նկատմամբ Կիպրոսի փոխառութեան : Ազդեցիկ իւրեաներ խորհուրդ տուած են Սուլթանին այսպէս շարժիլ, որպէսզի Կիպրոսի վրայ Սուլթանին գերիշխանութեան իրաւունքը որ անուանական է, բոլորովին չը կորուսի :

Չորսվար Օթիս որոշած է դադարեցնել թշնամութիւնները ու թ օրուան համար որպէսզի ապրտամբները կարողանան խորհիլ իր յայտարարութեան վրայ :

Ամերիկեան կառավարութիւնը լուր առաւ թէ Ալկինալոս կը վերակազմէ իր բանակը Մալթոսի հիւսիսային կողմը : Սակայն կատարեալ հաստք ունի թէ Չոր. Օթիս կարող է յաղթել անոնց :

Սէլանիկէն կը հեռագրեն թէ բազմութիւ թուրք զինուորներ կը տեղաւորուին Մակեդոնիոյ ամէն կէտերուն վրայ, Մավզերեան հրացաններ կը բաժնուին և թընդանօթներ կը զրկուին ամէն կողմ : Այդ պատրաստութեան առջև Մակեդոնական յեղափոխական խումբերը կը վարանին անցնել սահմանադրութիւնը :

Փարիզէն կը գրեն թէ կառավարութիւնը որոշած է դատարկուել Ֆիլիպո թերթը Տրէյֆիլսի խնդրին մասին Ոճրագատ Առեւտնին քննութիւնները հրատարակելուն համար :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չորսյ կը շրջի թէ Մ. Պաքմէթիէֆ Սօֆիայի Ռուս ներկայացուցիչը ետ պիտի կոչուի : Ռուսիա նեղացած կը թուի Իշխանին և նոր նախարարներուն Մակեդոնական գործերու և ելեւմտական վերջին պայմանագիրներուն պատճառով :

Մարտ 25ին Սօֆիայի յոյներու եկեղեցիին մէջ զայլակազական մեծ դէպք մը պատահած է : Յունական անկախութեան տարեգարձին աւթիւ կրօնական արարողութիւններ կատարուեցան որմէ յետոյ ըստ սովորութեան Յունական հիւպատոսը հայրենասիրական ճառ մը պիտի արտասանէր : Որովհետեւ հիւպատոսը կը լռէր, ներկաներէն մին կըսկի բանաստեղծութիւն մը արտասանել յեղեղով պատմական անուններ : Ներկայացուցիչը սակայն կուզէ արգելել զայն : Ատենարանը սաստկասէս կը զայրանայ և կը նախատէ զայն իբր ազգային շահերու անհոգ : Ներկայացուցիչին բարեկամները օձիքէն բռնելով դուրս կը նետեն ատենախօսը : Կիները և տղաքները կը վախնան : Բարեբաղդարար մէկ քանի անձեր շփոթութեանց առաջը կառնեն, սակայն Յոյն հասարակութիւնը նեղացած, չը ներկայանար ներկայացուցիչին ինչպէս սովոր էին շնորհաւորութիւններ ուղղել Ռուսական կառավարութեան :

Թուրք աղբիւրներէ հեռագրուած էր թէ Թուրքիա առարկութիւն ըրած, Պոլիարիոյ մասնակցութեան մասին Չինական վեհաժողովին, և յաջողած էր զայն դուրս ընել, բայց ըստ Բօլիթիլէ ֆօրէնտօնտէնի աշակերտ իրողութիւն մը բնագոյնութիւն չունի և թէ բոլոր այն ազգերը որք անկախ բանակներ ունին, պիտի մասնակցին Վեհաժողովին :

Տիրաք Կրէքօֆ և Խատուլաֆօֆ այցելելէ յետոյ Վիտին, Ռահօլա և Նիկոպոլիս, Սիլիստրէ գացին : Վերադառնալով Ռուսչուք մէկ քանի օր յառաջ հասան Վառնա, ուրկէ պիտի երթան նաեւ Պուրկալ և Փ. Պոլիս Իրենց այցելած տեղերը, երկու նախարարներն ալ համակրական մեծ ցոյցերով ընդունուեցան :

Նարոտնի Փրափա կըսէ թէ ազգային կուսակցութիւնը արդէն որոշած է իր ընտրելիները : Տր. Սթոյլօֆ ընտրելի պիտի ներկայանայ Սամաքօլի մէջ, Մ. Կիչէֆ Բարլօվայի մէջ, Մ. Սասլօֆ Եամպօլի մէջ և Մ. Պոպլէֆ Փ. Պոլսի մէջ :

Տր. Չակարօֆ և տեղակալ Փէթրօֆ որք Պոլիս գացին պուրկարօթուրք սահմանադրութիւն վերայ հակողութեան մասին միջոցներու վրայ խորհրդակցելու, ճրագիր մը պատրաստած են, սա-

կայն տակաւին բանակցութիւնները սկսած չեն պաշտօնապէս թուրք կառավարութեան ներկայացուցիչներու հետ :

ՏՕՔՐՈՐ ԱԼ. ԱԹԱԲԵԿՅԱՆ

Տեղափոխուած է Եւսէնի փողոց, թիւ 1234, Բ. թաղ, ոստիկանապետութեան կից : Հիւանդներ կընդունի ամէն օր առաւօտեան ժամ 8-10 և կէս օրէն վերջ 4-6 : ՄԻՍՅՆ ԱՂԱՍՏԵՆԵՐԸ ՁՐԻ :

ՎԱՐԳՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԵԱՆՔԻԾ) (Գին 1 Ֆրանկ)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Եւսէնի խմբագրատունը, Ֆիլիպի 8. Անտօն Կոչի մօտ, Ռուսչուք : Հոյկ Մայիսեանի սրճարանը :

ԱԶԳԻ

Հայ հասուն երիտասարդ մը որ գրիւկ հաշտապանութիւն, ծանօթ է տաճկերէն և զազգիերէն գրականութեան, կուզէ պաշտօն ստանձնել վաճառատան մը մէջ գիրքամտաչելի վարձատրութեամբ, կը համաձայնի նաեւ պարզ գործակատար ըլլալ : Գրմիլ խմբագրութեանս :

ԲԱԶՄԱՎԷՊ

ԱՄՍԱԹԵՐԹ

Տարեկան գին 10 Ֆր. — 4 լուպիլ. — 2 Տուրք : Հասցէ Բէտաքսիոն ար լա ուրվի Բազմալէպ. Ս. Լազար : Վերիկ (Իթալի)

ԽՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՆՆԱՐՈՒՄԻ

Կը ապագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցէտման, նամակազուրի, հարսանի կան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաեւ պրօշիւններ :

Գիններն յոյժ գիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին :

ՊՕՐՍԱ

Վառնա 3 Ապրիլ

ՊՈՒՂՏԱՅ Վախօն, լիպրա 55-58, հէքթօլ. 8.80-9.30 ֆրանք Արապա, լիպրա 55-60 հէքթօլ. 9-11 ֆրանք

ԱՐԲԱ Լիպրա 42-50 հէքթօլ. 6.10-6.40 ֆրանք

ՄԻՍԻՐ Վախօն, 55-57 լիպրա, 5.5-5.85 Առապա, 55-60 լիպրա, 5.90-6 Կիւնիկ 15-20 վախօն, 25-30 առապա կէլմէքաէ տիր :

ՏԱՐԸ Կիւնիկ 1-2 արապա կէլմէքաէ տիր. 58-60 լիպրա, 5.40-5.80 ֆրանք Առապա մուսուլէլէսի նարոյէն 21 ֆրանք հիւսպը իլէ տիր :

Отговорникъ : А. СУКЯСОВЪ Печатница "Взаимность" Варна.